Ուսանո՞ղ ես*
Նո՞ր ես ավարտել համալսարանը
Փնտրու՞մ ես պրակտիկայի կամ աշխատանքի հնարավորություն

Ծրագիրը նախատեսված է նախավերջին և վերջին կուրսի ուսանողների համար

«Վերապատրաստում և աշխատանք Ինեկոբանկում» ծրագրին մասնակցությունը հնարավորություն կտա.

- *Ինքնադրսևորվել մի միջավայրում, որտեղ արժևորում են նորարարական գաղափարները*
- *Ունենալ բազմակողմանի զարգացման անհատական ծրագիր*
- *Ձեռք բերել մասնագիտական աճի և զարգացման հեռանկարներ*
- *Ստանալ **ուղեգիր** դեպի Ինեկոթիմի մեծ ընտանիք*

Ծրագրի փուլեր.
Ծրագիրը բաղկացած է 4 փուլերից՝

Թեստավորում*
Հարցազրույց /Անհատական կամ խմբային/
Վերապատրաստում
Աշխատանքի ընդունում

**Թեստավորմանը հրավիրվում են ինքնակենսագրականների դիտարկման փուլը հաջողությամբ հաղթահարած մասնակիցները:*

Թեստավորում

Թեստը բաղկացած է տրամաբանական և մաթեմատիկական խնդիրներից, չի պահանջում մասնագիտական գիտելիքներ: Այս փուլի նպատակն է ստուգել թեկնածուների մտքի ճկունությունն ու տրամաբանական մտածողությունը:

Անհատական/Խմբային հարցազրույց

Անցկացվում է հարցազրույցների 2-3 փուլ, բացահայտելու հավակնորդների անձնական որակները, աշխարհայացքն ու համապատասխանությունն առկա թափուր պաշտոններին:

Վերապատրաստման փուլ

Յուրաքանչյուր մասնակցի համար ստեղծվում է վերապատրաստման անհատական պլան՝ ելնելով գիտելիքների մակարդակից ու պլանավորված մասնագիտացումից: Յուրաքանչյուր հավակնորդ վերապատրաստման ողջ ընթացքում ունենում է մենթոր, ով պատասխանատու է վերապատրաստման ընթացքի առավելագույն արդյունավետության համար: ***Վերապատրաստումը տևում է 2-3 ամիս և վարձատրվում է:***

Աշխատանքի ընդունում

Վերապատրաստման ամփոփման դրական արդյունքների դեպքում թեկնածուները կստանան աշխատանքի առաջարկ հետևյալ պաշտոններում.

Ֆինանսական խորհրդատու /ք. Երևան, ք. Աբովյան/

- Հաճախորդի պահանջմունքների բացահայտում և խորհրդատվության տրամադրում
- Վաճառքների նոր սխեմաների և գործիքների նախաձեռնում և կիրառում
- Մասնակցություն բանկի կողմից կազմակերպված արտագնա վաճառքի ակցիաներին, ցուցահանդեսներին
- Բանկի վաճառքներին առնչվող այլ աշխատանքներ

Գործառնավար-գանձապահ /ք. Երևան/

- Բանկի ծառայությունների պայմանների և սակագների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում
- Կանխիկ գումարների և այլ արժեքների ընդունում, տրամադրում
- Միջբանկային, ներբանկային փոխանցումների իրականացում
- Բանկային, ավանդային հաշիվների համալրում/ելքագրում
- Վարկերի կանխիկ և անկանխիկ մարումների իրականացում
- Տեղեկանքների, քաղվածքների դիմումների ընդունում, տրամադրում

Միկրո հաճախորդների խորհրդատու /ք. Երևան, ք. Գյումրի/

- Միկրո հաճախորդների ներգրավում, բիզնեսի վերլուծություն
- Միկրո հաճախորդների բազայի կառավարում
- Միկրոֆինանսավորման ոլորտների վերլուծություն, նոր պրոդուկտների մշակման նախաձեռնում

Բիզնես խորհրդատու /ք. Երևան, ք. Գյումրի/

- ՓՄՁ հաճախորդների բազայի ստեղծում և ներգրավմանն ուղղված այցելությունների իրականացում
- Խորհրդատվության տրամադրում, ՓՄՁ հաճախորդների վարկային պահանջմունքների բացահայտում
- Վարկային հայտի վերլուծություն և հաստատում
- Վարկային պորտֆելի վերլուծություն, վաճառքի նոր հնարավորությունների բացահայտում և իրականացում

Դե ինչ, եթե Քեզ հետաքրքրեց այս առաջարկը, դիմի՛ր և ստացիր Քո՛ հնարավորությունը:

Ինչպե՞ս դիմել
Սեղմի՛ր «**Դիմել**» կոճակը և լրացրու՛ դիմում-հայտը մինչև ս.թ. հունիսի 30-ը: